



## ԳԼԵՆԴԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹ-ԱՇՐՉԱՆ

223 North Jackson St., Glendale, California 91206-4380

Հեռախոս՝ 818-241-3111 • Ֆաքս՝ 818-548-9041

Մեպտեմբերի 29, 2020թ.

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի հարգելի աշակերտներ, աշխատակազմ, ընտանիքներ և համայնք,

Ինչպես հավանաբար տեղեկացված եք, Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության վրա հարձակման հետևանքով Հայաստանի և Ադրբեջանի սահմանի երկայնքով սրվող հակամարտություն է ընթանում: Սա պատմության մեջ ողբերգական պահ է, և իմ սիրտը բոլոր ընտանիքների հետ է, ովքեր մեծապես տուժել են են այս հարձակումներից:

Անկարգությունների ժամանակ կարևոր է, որպեսզի մենք համախմբվենք և աջակցենք միմյանց, որպես համայնք: Խնդրում ենք կարեկցանք և բարություն ցուցաբերել մեր աշակերտների, աշխատակիցների և ընտանիքների հանդեպ, ովքեր, որպես սփյուռքահայեր, կարող են խորապես ազդված լինել այս ողբերգությունից, և հատկապես նրանց հանդեպ, ովքեր կարող է ընտանիքի անդամներ ունեն տուժած տարածքներում:

Ես ուզում եմ վերահաստատել Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի հանձնառությունը՝ բոլոր աշակերտների համար ապահովելու անվտանգ ուսումնական միջավայր և զգացմունքային աջակցություն: Չնայած մենք ֆիզիկապես հեռու ենք միմյանցից, այնուամենայնիվ Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն ունի խորհրդատվության և հոգեկան առողջության համար անհրաժեշտ միջոցներ, որոնք այն աշակերտների, աշխատակիցների և ընտանիքների համար են, ովքեր դրանց կարիքն ունեն: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել [www.gusd.net/health](http://www.gusd.net/health) կայքէջում:

Մենք բազմատեսակ համայնք ունեցող կրթաշրջան ենք, որը ողջունում է աշակերտներին և ընտանիքներին ամբողջ աշխարհից: Կարևոր է, որ մենք ընդունենք միմյանց տարբերությունները և բարյացակամորեն վերաբերվենք միմյանց նկատմամբ, քանի որ միասին աշխատում ենք Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի ավելի ուժեղ համայնք կառուցելու նպատակով:

Հարգանքով՝

Վիվիան Էքշտեյն, Կրթ. Դեկտր.  
Դպրոցների գերատեսուչ